

Արամ Տեր-Ղևոնդյանը XX դ. երկրորդ կեսի ակնառու Հայ պատմաբան արևելագետներից է. որը հարուստ գիտական ժառանգություն է թողել: Նա արաբագետ էր, Հայ միջնադարյան աղբյուրների հմուտ ղիտակ, վաստակաշատ թարգմանիչ: Մի շարք լեզուներից ունեցած գիտելիքները, գրաբարի տիրապետելը մեծապես նպաստեցին նրա գիտական գործունեության արդյունավետությանը: Բավական է միայն հիշել Հայ միջնադարի երկու նշանավոր պատմիչների երկերի գրաբարից կատարած նրա արժեքավոր թարգմանությունները՝ Ագաթանգեղոս և 'Ղևոնդ պատմիչ: Ի դեպ, սա պատահական չի եղել նրա ստեղծագործական հետաքրքրություններում. այս երկու պատմիչների երկերի հետ կապված բազմաթիվ լրացուցիչ ուսումնասիրություններ կան նրա հոգվածներում: Երևանի պետական Համալսարանի Հրատարակչությունը 2003 թ. լույս է ընծայել մի մեծարժեք ու ստվարածավալ Հատոր, որն ամփոփում է Ա. Տեր-Ղևոնդյանի տարբեր տարիների գիտական մամուլում հրատարակած 66 հոդվածները, որոնք հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով ստղյուգվել են թի՛ Հայաստանի, թի՛ արտասահմանի սլարբերական մամուլում և թի՛ տարբեր ժողովածուներում: Ի ոլոր հոգվածներն արտասպություններ են, այսինքն՝ ներկայացված են այնպես, ինչպես դրանք հրատարակել է Ա. Տեր-Ղևոնդյանը: Ժողովածուն ունի սեղմ «Ներածություն» (XI-XV էջեր), որի հեղինակն է գիտնականի որդին՝ Վահան Տեր-Ղևոնդյանը: «Ներածությունը» որդիական ու քաղաքացիական բովանդակություն ունեցող ջերմ խոսք է, որում տուկա է պատմաբան, աղբյուրագետ, թարգմանիչ, հայրենասեր ու բարեխիղճ, ազնիվ ու ջանասեր անհատականության խիստ տեսանելի դիմանկարը, վերջում նշվում է, որ ժողովածուն նվիրված է անվանի գիտնականի ծննդյան 75-ամյակին: Թեպետ հոգված-

ները հատորում դասավորված են ժամանակագրական հերթականությամբ (1956-1990), «Ներածության» մեջ դրանք ենթարկված են գիտական լեռնատիկ դասակարգման՝ հետևյալ խորագրերի տակ՝ ա) Հայաստանի վարչաքաղաքական պատմությունը VII-XI դդ., բ) Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունը VIII-IX դդ., գ) Հայաստանի իրավական վիճակը VII-IX դդ., դ) Արաբական ամիրությունները Հայաստանում, ե) Աղբյուրագիտական (Աղաթանգեղոսի «Պատմություն Հայոց»), զ) Աղբյուրագիտական (այլ), է) Հայկական և արաբական առասպելներն ու գրույցները արաբական աղբյուրներում, ը) Հայ-արաբական միջնադարյան կրոնամշակութային կապերը, թ) Հայ միջնադարյան մշակույթի գործիչներ, ժ) Հայ քաղաքական գործիչները արաբական պետություններում, ժտ) Աստվածաշունչ, ժբ) Վիմագրություն, ժգ) Տոմարագիտություն, ժդ) Աղվանքի պատմություն, ժե) Պատասխանս կրթությունը:

Ա. Տեր-Ղևոնդյանի հոգվածները ժողովածուի առաջին էջում սեղադրված է տողանդավոր քանդակագործ Արտուշես Հովսեփյանի 1976 թ. կատարված խիստ բնութագրական գծանկարը: «Ներածության» մեջ նշանավոր գիտնականին տրված բնորոշ գծերը լիովին ամփոփված են այդ գծանկարում: «Մարդիկ կարծես բնազդաբար զգում էին այդ բարձրահասակ և արտահայտիչ արտաքինով հայորդու ներսում բնակվող մեծ ոգու ներկայությունը: Այդ զգացումը էջի անհետանում նույնիսկ, երբ ի հայտ էր գալիս ներքին մեծ բարությունը, զրևի մանկական շիտակությունը, կենդանային աչքաբացությունից անսահման հեռու, մտավորականին հատուկ միամտությունը: Ընդհակառակը, դա կարծես ավելացնում էր պատկառանքը, ինչպես լինում է սովորա-

կանից դուրս, ինքնատիպ ու անբացատրելի էրևույթի հետ շփոխելիս»¹:

Հայ միջնադարյան գրողներից երեքի դիտական դիմանկար-բնութագրերը Ա. Տեր-Ղևոնդյանը պատրաստել է Հայերեն և ռուսերեն լեզուներով «Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դարերում» ժողովածուի Համար²: Այդ երեք գրողներն են՝ Ագաթանգեղոսը, Սեբեոսը, Ղևոնդը: Թուսերեն լեզվով նույն Հոգիվածները լույս են տեսել «Видные деятели армянской культуры V - XVIII вв.» հատորում³:

Ա. Տեր-Ղևոնդյանը ագաթանգեղոսագետ էր. նա Հայանարեբել էր Ագաթանգեղոսի պատմության արարներն թարգմանությունն ամբողջական բնագիրը և առանձին ծավալուն Հոգիվածով ներկայացրել արարներին բնագրի լուսապատճենը և վերջինիս արդյուն Հայերենով թարգմանությունը: Նա լիովին հիմնավորում է, թե ինչու քրիստոնեական միջնադարյան իրականության մեջ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» գտավ միջազգային տարածում և թարգմանվեց բազմաթիվ լեզուներով Հայտնի անձեր դարձնելով պատմության երկու կերպարներին՝ Գրիգոր Լուսավորչին և Տրդատ Մեծին: Նա Հատորն նշում է Ագաթանգեղոսի երկի պատմական, ճանաչողական, մշակութային, դրական արժանիքները, թարգմանություններում եղած առաջնահերթ ու ակնառու առանձնահատկությունները: Օրինակ, Ագաթանգեղոսի Հունարեն բնագրի մեջ թարգմանվել են նաև Հիթտոսոս աստվածների անունները: Արամայգ - Ահա, Անահիտ - Արսեմիտ, Վահագն - Հիրակես, Ասողիկ - Աֆրոդիտե, Նանե - Աթենաս, Միհր - Հեփեսոս, Տիր - Ապոլոն և այլն⁴:

¹ Ա. Տեր-Ղևոնդյան, 2003, էջ XI:

² Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դարերում. Երևան, 1976, էջ 26-35, 125-133, 142-149:

³ Видные деятели армянской культуры V-XVIII вв. Ереван, 1982, с. 23-28, 99-102, 111-116:

⁴ Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 501: Հիշենք՝ Մովսես Սորենացին Վահագնի մասին խոսելիս գրում է. «Ասրա որդի Բար, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք...: Հայս երգելով ոմանց բամբուս, լուսաք իսկ ականջօք մերովք: Յնտ որոյ և ընդ վիշապաց ասլին յերգն կուռել նմա և յաղթել, և կարի իմն

Շատ կարևոր է, որ «Ագաթանգեղոս» Հոգիվածում Ա. Տեր-Ղևոնդյանը շեշտում է, թե ինչ աշխարհագրական դաշտում տարածվեց քրիստոնեությունը ողջ Հայաստանում Սատաղայից⁵ մինչև Մասքութների երկիրը, մինչև Աղվանքի դարպասները, մինչև Կասսից ծով ու Փայտակարան, մինչև Մարաստանի ու Ատրպատականի սահմանները:

Ա. Տեր-Ղևոնդյանը գիտականորեն բնութագրում է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ եղած Կրիգոր Լուսավորչի «Վարդապետություն» աստվածաբանական արժեքը, միաժամանակ մատնացույց անում այս պատմական երկի գեղարվեստական ուշագրավ հատվածները: Դրանք խոսքովի և Տրդատ Մեծի կերպարներն են և հասկապես Տրդատի գլխերային տեսիլը, որը գեղարվեստորեն խիստ ազդու է ուսուցիչի և ավարտում է աստվածային հետևյալ պատվիրանով. «Շինեսլի՛ր գտաճար անուանն Աստուծոյ ի տեղուջն, որ յուսյաւ քեզ, ուր սիւնն Հրեւիէն ունէր գոսկի խարխիսն, և զվկայարանս սրբոցն ի տեղիսն, զենան ինքեանք ի կենդանութիւն Աստուածութեան յուսոյն: ... Եւ զայս ասացեալ՝ շարժումն եղեալ, և ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն»⁶:

Ընդհանրապես Ա. Տեր-Ղևոնդյանի հետազոտություններն աչքի են ընկնում աղբյուրների քաջիմացությունը և դրանց շուրջ եղած հետազոտությունների, թե՛ Հայերեն և թե՛ օտարալեզու, խոր ծանոթությամբ: Նա կանգ է առել Ագաթանգեղոսի Հունարեն

նմանագոյն գլխավորապէս նահատակութեանց նմա երգերին (տես Մ. Խոսրոսի և Գ. Պատմություն Հայոց. Թիֆլիս, 1913, էջ 87):

Իրիտանական թանգարանի կրպակում վաճառվող հայկական Անահիտ Աստվածուհու բրոնզե գլխի բացիկի հետևի մասում գրված է. (Bronze head of Aphrodite-type goddess, from Sadagh, north-east Turkey Greek, second-first century BC, Ht 38 cm. Cat. of Bronzes no. 266) (Իրոնդե գլուխ Աֆրոդիտեի տիպի աստվածուհու, Սատաղայից, Թուրքիայի հյուսիս-արևելքից, մ.թ.ա. II-I դդ., բարձրությունը՝ 38 սմ, բրոնզե իրեքի կատարյալ № 266): 1986 թվականին Անահիտ աստվածուհու գլուխը չուղարկված էր հունական դահլիճներից մեկում, իսկ տակը գրված էր «Պարսից աստվածուհի Անահիտ, գտնված Սատաղայում Թուրքիայում:

Ագաթանգեղոս. Պատմություն Հայոց. Երևան, 1983, էջ 424:

թարգմանությունների և գրանից կատարված այլալեզու թարգմանությունների առանձնահատկությունների վրա և խորապես համոզված նշել, թե Ագաթանգեղոսի պատմության հետազոտությունը դեռ չի ավարտվել:

Միանգամայն հասկանալի է, թե ինչու Ա. Տեր-Ղևոնդյանը պետք է գրեր նաև Սեբեոսի մասին. սա այն պատմիչն է, որի երկն ունի միջազգային արժեք՝ Արևելքի երկրների պատմությունն ուսումնասիրելու գիտակեցից, և նա էլ այն պատմաբանն էր, որ ծանոթ է արարելինով շարագրված նույն ժամանակահատվածի այլ սկզբնաղբյուրներին: Նա մասամբ հենվելով Կեոբյե Աբդարյանի հետազոտության վրա խոսում է Անանունի առեղծվածի մասին և ապա շատ սպառիչ բնորոշում Սեբեոսի երկի պատմական և գեղարվեստական արժանիքները: Սեբեոսի երկը ներկայացնում է VII դ. Հայ իշխանների ջանքերը Հայաստանի անկախությունը վերականգնելու ուղղությամբ: Ա. Տեր-Ղևոնդյանը հիմնավորում է, թե ինչու թեոդորոս Ռչտունու՝ արաբների հետ կնքած պայմանագիրը Հայ գլխավորատուության ելակի երևույթ է: Նա մանրամասնում է նաև Սմբատ Բագրատունու վիպական կերպարի դեղարվեստական ներդրումն երևույթ լինելը: Կարևոր է նաև, որ Սեբեոսն օգտվել է իր ժամանակներում եղած դիվանագիտական փաստաթղթերից, որոնք նրա երկին հաղորդում են մի առանձին կարևորություն:

Ղևոնդն այն պատմիչն է, որը այսօրվա Հայ ընթերցողին ծանոթ է Ա. Տեր-Ղևոնդյանի օրինակելի թարգմանությամբ: Հետաքրքիր է, որ այդ դիրքն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն լեզվով Փարիզում, 1856 թ., հետո միայն, մեկ տարի անց, հրատարակվել է գրաբարյան բնագիրը: Այս հոդվածում ևս հեղինակը խոսում է երկրագրական արժանիքների, հատկապես տիկին Շուշանի մասին, որը մեծահոգության և լայնախոհության մարմնավորում է: Ճշտորեն բացատրվում է նաև, թե ինչու Ղևոնդը համարվում է առաջին Հայ պատմիչը, որն օգտագործել է Հայկական թվականը:

Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածներում լուսաբանվում են Հայ-արաբական դրական և բանահյուսական կապերը: Այդ առումով

ուշագրավ է «Աղջիկ Տարոնի զրույցը» XII դ. արաբական աղբյուրներում: Սրանք «Սասնա ծռեր» Հայ ժողովրդական վեպի արձագանքներն են, որոնք VII-X դդ. ներթափանցել են արաբական միջավայր և ստացել արաբական գունավորում: Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանաբար ներկայացնում է արաբերեն բնագիրը:

Պարզվում է, որ Մասիս լեռը Հանդես է եկել արաբական ժողովրդական բանահյուսության մեջ՝ ձևավորելով առանձին արաբական զրույց այդ լեռան մասին: Մասիս լեռան և Արաքս գետի մասին այս արաբական զրույցը երկու աղբյուր ունի Հայկական և արաբական, որոնց միաձուլումից էլ այն առաջացել է: 1840 թ. Մասիսի ահեղ երկրաշարժից դեռևի տակն անցան Ակոռի գյուղը և Ս. Հակոբի վանքը. դրա հիման վրա էլ ստեղծվել է Հայ-արաբական խառը զրույցը, որի հիմքը Հայկական է: Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածներից իմանում ենք, որ արաբական մատենագրության մեջ հետաքրքիր զրույցներ կան Հայերի ծագման (№21), Արայի և Շամիրամի (№22), Կարս քաղաքի (№23), «Սասնա ծռեր» էպոսի պատմական հիմքի մասին և այլն:

Մի առանձին հոդվածում դիտնականը ներկայացնում է, թե արաբները ինչ էին վերցնում որպես բնահարկ Հայաստանից: Ցուցակում հատուկ տեղ են զբաղեցնում Հայկական գորգերը և ընտիր դիպակե գործվածքները:

Արաբ պատմիչ Ֆարիկին «նփրկերտի պատմության» մեջ (XII դ.) գրել է Հյուսիսային Հայաստանի գեոլոգիայի մասին: Այդ պատմության ձևագիր օրինակը գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում, հրատարակված երեք հատվածներն էլ Հայերեն թարգմանել ու հրատարակել է Ա. Տեր-Ղևոնդյանը:

Պատմաբանն առանձին հոդվածներ է նվիրել Հայ նախարարների հողատիրական իրավունքներին VII-IX դդ. խալիֆայության սլամանագրերում, ինչպես նաև Հայ ժողովրդի իրավական վիճակին՝ արաբական տիրապետության ներքո: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում քրիստոնյա արաբների և Հայերի փոխկապերին նվիրված հատվածը: Աբբասյան խալիֆայության

թուլացումից հետո՝ XI–XIII դդ., այսինքն՝ սելջուկյան տիրապետության շրջանում արդեն գոյություն ունեւր քրիստոնյա արաբները մի հսկայական զանգված, որն արաբների հետ դեռ օգտագործում էր ասորերենը, ղպտերենը, հունարենը: Արաբացած ասորերենը և ղպտերենը դառնում էին նահանգների կառավարիչներ և երբեմն նույնիսկ մահմեդական տիրակալների վեզիրներ: Հայաստանը սերտ հարաբերության մեջ էր արևելյան քրիստոնյաների հետ, և Հայոց թագավորությունը՝ Բագրատունիների և Կիլիկիայի, բարոյապես զորավիգ էր դարձել քրիստոնյա արաբներին: Դրա ապացույցն այն ջերմ բարեկամությունն էր, որ գոյութուն ունեւր Ներսես Շնորհալի կաթողիկոսի և ասորիների Հոգևոր առաջնորդի՝ Միքայել Ասորու միջև: Վերջինս 1198-ին Տարսուսում ներկա էր Լևոն II Մեծագործի թագադրութանը: Այդօրինակ իրողութունների հետ են կապվում հայ և քրիստոնյա արաբ մատենագիրների առնչումները IV–VII դդ., երբ Արաբիայում ծնունդ է առնում այդ տարածքի քրիստոնյա արաբական մատենագրությունը: Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է արաբացած ասորիների և ղպտերների հինդ տեսակ համայնների մասին՝ նեստորական, հակոբիկ (միաբնակ), մելքիտ (հունադավան), ղպտի և մաբոնի: Նա գրում է նաև Գրիգորիս Արուլ Ֆարաջի մասին, որը բազմակողմանի զարգացած արաբ մատենագիր էր և նրա նշանավոր աշխատությունը «Պետությունների համառոտ պատմությունը» գիրքն է⁷:

Հայ-արաբական դրական առնչություններին բազմիցս անդրադարձել է Հայագրությունից մեծ երախտավոր Ն. Մառը, որը փաստերով ապացուցեց Վարդան Այվեկցու «Աղվեսագրքի» հայերենից արաբերեն թարգմանված լինելու իրողությունը: Ա. Տեր-Ղևոնդյանը խոսում է նաև Հայագրի

մի քանի արաբ գրողների մասին, որոնք գործել են XII–XIII դդ., ինչպես նաև XV դ: Հայագրի Արու Սալիհ ալ-Արմանին հեղինակ է եգիպտոսում գտնվող վանքերի ու եկեղեցիների պատմության: Այս աշխատութունը հայերեն է թարգմանել Ղևոնդ Ալիշանը՝ կցելով համապատասխան ուսումնասիրություն: Ընդհանրապես արաբալեզու քրիստոնեական գրականության մեջ կարևոր կերպար է եղել Գրիգոր Լուսավորիչը⁸:

Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն ընդվզում էր հայ ժողովրդի պատմական անցյալը նենդախոսող մահմեդական պատմաբանների դեմ, որոնց պարագլուխը խորհրդային շրջանում Ջիա Բունիաթովն էր: «Հողվածների ժողովածուում» առկա է «Об очередных "размышлениях" З. М. Буниатова» հոդվածը, որը պատասխան է Ջիա Բունիաթովի հարձակումներին: Հոդվածի տակ ստորագրել են ՀՀ ԳԱԱ իսկական անդամներ Արամ Ղանալանյանը և Լևոն Խաչիկյանը:

Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածներից մեկը վերաբերում է Հաղպատի վանքի արաբերեն արձանագրությանը և Բագրատունի թագավորների տիտղոսներին: Արաբերեն արձանագրությունը թարգմանված է «Շահնշահ Անիի, թագավոր»: Շահնշահը սիրված տիտղոս էր Բագրատունի Հայ թագավորների համար, Գագիկ I-ը (990–1020), օրինակ, միշտ կոչվում էր «Շահնշահ Հայոց և Վրաց» տիտղոսով, մինչդեռ բյուզանդական Հայ թագավորներին կարծես նսեմացնելու համար կոչում էին «Մեծ Հայքի իշխանաց իշխան» տիտղոսով: Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածներից մեկում հիմնավորվում է, թե ո՞ր ժամանակահատվածից թվականությունը պատմագրությունը մուտք գործեց Հայ պատմագրության մեջ, և գրաառաջին կիրառողը համարվում է X դ. վերջի և XI դ. սկզբի պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը:

Հայտնի է, որ արաբների դեմ մղված ընդվզումների մեջ ամենահուժեղն էր եղել է 703-ին բռնկվածը: Այդ հզոր ապստամբության մասին վկայում են Ղևոնդը և Հովհան-

⁷ Սա քրիստոնյա արաբ մատենագիրների մեջ նշանավորագույնն էր: Իմացել է շատ լեզուներ, թողել է գրական հարուստ ժառանգություն: Անվանի արաբագետ Ն. Վ. Պիգուլևսկայան նրա մասին գրում է. «Արուլ Ֆարաջի գիտական պատրաստվածությունը և գրական հակումները հենվել են նրա մի քանի լեզուների իմացության վրա: Նա գրում էր արձակ և չափածո՝ ասորերեն և արաբերեն լեզուներով, ծանոթ էր հունարենին և հայերենին» (А б у л ь - Ф а р а д ж. Книга занимательных историй. М., 1957, с. 4):

⁸ Գրիգոր Լուսավորչի անունը կա եվրոպական հանրագիտարաններում:

նեա Դրասխանակերացին, սակայն ուսովի մեծարժեք են արար սրտամիջ Մուհամմադ իրն Արզուլլահ իրն Աասամ ալ-Քուֆիի (X դ., մահացել է 926-ին)՝ 703 թ. ապստամբության և խալիֆաթի հայերի դեմ ձեռնարկած Հաշվեհարդարի մասին փաստերը: Հայ ապստամբ նախարարներին խաբեությամբ մոցնում են Նախիջևանի և Խրամի եկեղեցիները, խալիֆին երգում տալու պատրվակով, գուները մխտում և այրում. «Սակայն երբ իմացավ, որ բոլորը հավաքվել են եկեղեցիներում, գուները նրանց վրա փակել ափեց, և եկեղեցիները ներսում եղածների հետ միասին նսոյթի կրակով այրեցին: Այդ եկեղեցիները մինչև օրս կոչվում են վաղածներ (մուհաարիկա)»⁹:

Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է նաև այն նշանավոր հայերի մասին, ովքեր արաբական խալիֆաթում զարձան առաջնակարգ պետական պաշտոնյաներ և մեծ դեր խաղացին այդ երկրների ներքին ու արտաքին կյանքում: 1135-ին Ձաթլիմյան խալիֆայության վեղիր է գառնում Վահրամ Պահլավունին և վերականգնում է կարգ ու կունսը եգիպտոսում:

Հոգիածներից մեկը կոչվում է «Արեկիքի երկրները 5-18-րդ դարերի հայ պատմադրության էջերում» և հիմնավորում է թե ինչու եվրոպայում և Ռուսաստանում XIX դ. արագորեն սկսեց զարգանալ հայագիտությունը, որովհետև թե՛ հայ և թե՛ օտարազգի հայագետները՝ Սևն-Մարտինը, Ք. Պատկանյանը, Մարկվարտը, Ն. Ադոնցը, Մ. Բրոսեն, Հյուբերտը, Ա. Վասիլեր, Էդ. Դյուլորին, Փ. Լորենը, Ֆ. Նեյը, Թ. Ավգալբեգյանը, Ղ. Ալիշանը, Ն. Մասը և ուրիշներ մեծապես օգտվել են Արեկիքի երկրների մասին հայ պատմիչների հաղորդած ստույգ փաստերից:

Ա. Տեր-Ղևոնդյանի Հոգիածները բազմազան են և կարևոր հասկացիա հայագիտության մեջ նոր հմտացող երիտասարդ մասնագետների համար՝ իրենց ուսուցողական ներքին բովանդակությամբ: Շատ ցանկալի է, որ այս դիտական փաստերով ու եզրակացություններով հարուստ հատորը լինի Հայաստանի հումանիտար թեքում ունեցող բարձրագույն ուսումնական բուրջ հաստատությունների գրադարաններում:

ԱԵԼԻՏԱ. ԴՈԼՈՒՆԱՆՅԱՆ

⁹ Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 528: